

---

ԿՈՄԻՏԱՍԻ ՄՇԱԿԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻ ԵՐԳԻ  
ԱՐՁԱԳԱՆՔԸ ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ

ԱՆԱՀԻՏ ՅԱՀՅԱՄԱՍԻՉԻ (ԹԵՀՐԱՆ)

*XX դարում իրանական և հայկական մշակույթների բնագավառում, հատկապես ժողովրդական արվեստի առումով, նշանակալի շրջադարձեր են կատարվել: Իրանում այդ փոփոխությունները կապվում են Սադեղ Հեղայաթի, իսկ հայկական միջավայրում՝ Կոմիտասի անվան հետ: Իսոր ու անմիջական են երկու հեղինակների կապերը ժողովրդական երգարվեստի ոլորտում: Եթե Ս. Հեղայաթի համար ժողովրդական երգարվեստի հմայքները բացվում են դեռ վաղ հասակից և պայմանավորված են նրա միջավայրի, ընտանիքի գործոնով, ապա Կոմիտաս վարդապետի մոտ արյան կանչն է խոսել: Չմոռանանք, որ հայերենին ու հայկական մշակույթին Կոմիտասը հատրդակից է դարձել պատանի հասակում:*

*1930 թ. Ս. Հեղայաթը Ֆրանսիայից վերադառնալուց հետո հանգում է այն որոշման, թե իր առաջին գործը ժողովրդական բանավոր գեղարվեստական ավանդությունը կորստից փրկելը պիտի լինի: Ֆրանսիայում ապրած տարիներին նա ուսումնասիրում է օտար ազգերի ժողովրդական երգերը, այդ թվում՝ հայկականը: Ս. Հեղայաթը ժողովրդական երգերին անդրադառնում է իր «Օսանե» ժողովածուի մեջ և առանձին հոդվածներում: Առաջին անգամ «Օսանե»-ն հրատարակվել է 1931 թ. «Արյան Քողե» ամսագրում: Հետագայում՝ 1939 թ., նա գրում է «Ժողովրդական երգեր» վերնագրով մի հոդված և տպագրում «Մուսիդի» ամսագրի 6-րդ և 7-րդ համարներում: Երաժշտագետ և երգահան չլինելով հանդերձ՝ քաջ գիտակցում է պրոֆեսիոնալ երաժշտության տարբերությունը ժողովրդական երգերից և համոզված է, որ այդ երգերը մեծատաղանդ երաժշտագետների ստեղծագործությունների ոգեշնչման աղբյուր են հանդիսացել. «Գերմանիայում ժողովրդական երգերը (Volkslied) արժևորվել և առաջընթաց են արձանագրել, քանի որ մեծ երգահանները՝ Ա. Մոցարտը, Կ. Մ. Վ. Վեբերը, Ֆ. Պ. Շուբերտը և Լ. Շումանը, այդ երգերի մեղեդիներն իրենց հորինած ինքնուրույն ստեղծագործությունների հիմքն են դարձրել: Ռուսաստանում հին ժամանակներից ժողովրդական երգերը ազգի հոգեբարոյական նկարագրի ձևավորման և դաստիարակության կարևոր աղբյուր են եղել: Իսկ որոշ երկրներում, ինչպես Հունգարիայում, այն ազգային երաժշտության հիմքն է համարվում»<sup>1</sup>:*

*Պատահական չպետք է դիտել Էջմիածնի վանքից Կոմիտասի հաճախակի անհետացումը գյուղ աշխարհ, ուր զբաղվում էր ժողովրդական երգերի հավաքագրմամբ: Այդպես Իրանի գավառներում*

---

<sup>1</sup> Ս. Հեղայաթ, Իրանի ժողովրդական մշակույթը, Թեհրան, 1385, էջ 204 (պարսկ.):

ժողովրդական արվեստի նմուշների հավաքմամբ էր զբաղվում նաև իրանցի բանագետը: Հեղայաթ հետազոտողին հատկապես սրտամոտ և հարազատ էր բանահյուսությունը, որը նա դիտում էր որպես անանց արժեք: «Ժողովրդական բանահյուսության ակունքը շատ հին է և համընկնում է մարդկային ոգեդեն առաջին ծորումներին, բայց պետք է վկայել, որ այս տարրական արվեստը այնքան ուժեղ է և այնքան կենսունակ, որ չի անհետացել»<sup>2</sup>, – գրում է նա: Ավելի կտրուկ է Կոմիտաս վարդապետի բնորոշումը ժողովրդական արվեստին: «Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը. գնացեք և սովորեք նրանից»<sup>3</sup>, – հայտարարում է նա:

Կոմիտաս վարդապետը 1900-ական թվականներին մտադրվում է Մանուկ Աբեղյանի հետ մի երգարան հրատարակել՝ սկսելով ժողովրդական երգերից: Նրանք բազմաթիվ խաղեր են գրի առնում ընկերներից ու աշակերտներից: Մ. Աբեղյանը այդ մասին գրում է. «Ես էլ, Կոմիտասն էլ ունեինք բավական թվով քառյակներ ժողոված, ձեռք բերինք բազմաթիվ խաղեր նաև մեր ընկերներից և աշակերտներից... Բայց այդ ամենը բավական չհամարելով՝ ամռան իրենց ծնողների մոտ և առհասարակ գյուղերը գնացող աշակերտներին պատվիրեցինք ժողովել ժողովրդական երգեր»<sup>4</sup>: Մ. Հեղայաթը նույնպես չի դադարել խրախուսել իր հայրենակիցներին՝ ժողովրդական բանահյուսության հավաքման աշխատանքներին նրանց մասնակից դարձնելու համար: Նա համոզված է, որ այս գործի առաջընթացին դպրոցականները նույնպես կարող են օգնել՝ իրենց ընտանիքներից և շրջապատից հետաքրքիր նյութեր ձեռք բերելով: Մ. Հեղայաթը նաև գտնում էր, որ այդ գործին պետք է մասնակից դառնա ցանկացած մասնագիտություն ունեցող անձ՝ լինի աստղագետ, բժիշկ, լեզվաբան և այլն. «Յուրաքանչյուր կրթված անձ, որը հետաքրքրված է պատմությամբ, գրականությամբ և գիտությամբ, կարող է մասնակից դառնալ բանահավաքչական ուսումնասիրության: Այդ մարդիկ կարող են լինել ինժեներ, գիտնական, դպրոցի ուսուցիչ կամ համալսարանի դասախոս»<sup>5</sup>:

Մ. Հեղայաթը ժողովրդական երգերի ուսումնասիրության գործում անդրադառնում է մանկական, մայրերի և դայակների երգերին ու գեղեցիկ գուգահեռներ կատարում իրանական և հայկական ժողովրդական երգից. Մաղեղ Հեղայաթ–Կոմիտաս երկխոսությունը կայանում է մանկական մի երգի շուրջ:

«Օսանե»-ի մի հատվածում Մ. Հեղայաթը մանկական երգերի մասին հետևյալ կարծիքն է հայտնում. «Մանկական երգերը փոքրիկների հոգու ու կյանքի հետ այնքան համահունչ են, որ պահպանել են իրենց թարմությունը, և ոչ մի բան դրանց չի փոխարինել»<sup>6</sup>:

Մանկական երգերի հետ կապված Կոմիտասի նախասիրությունների մասին կարդում ենք Գարեգին Լևոնյանի մոտ. «Դեռ աշակերտ եղած ժամանակից, 1885 – 86 - ից, շրջելով

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 201:

<sup>3</sup> «Հայրենիքի ձայն» (շաբաթաթերթ), 18 նոյեմբերի 1969:

<sup>4</sup> Գ. Գ ա ս պ ա ռ յ ա ն. Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Երևան, 2009, էջ 14–19:

<sup>5</sup> Մ. Հ ե դ ա յ ա թ. նշվ. աշխ., էջ 260:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 164:

Էջմիածնի գավառը, ձայնագրել-հավաքել էր մի քանի տասնյակ ժողովրդական երգեր ու այժմ (1893–94-ին) այդ երգերը մտցրել էր դպրոցական ծրագրի մեջ ու դասավանդում էր»<sup>7</sup>: Մանուկների կյանքում երգերի դերակատարության մասին Կոմիտասն արտահայտվում է 1912 թ. մի դասախոսության մեջ. «Մանուկն ինչ զգացումի տակ որ ըլլա, այդ զգացումը կարտահայտե որոշ երգերով: Երգը ներքին՝ հոգեկան զգացումին արտահայտության մեկ ձևն է ... Արդ կրնա ըմբռնվիլ, թե որքան կարևոր են մանուկին դաստիարակության մեջ երգեցողության ընծայվելիք հոգաճությունն ու պարտավորությունը»<sup>8</sup>:

Ս. Հեղայաթը Կոմիտասի մասին ակնարկում է 1939 թ. գրած «Պարսից ժողովրդական երգեր» հոդվածում: Նա անդրադառնում է հայ տաղանդաշատ երաժիշտ-ազգագրագետ, կոմպոզիտոր, գեղագետ՝ Կոմիտաս վարդապետի ուսումնասիրություններից մեկին, որը դասվում է գեղջկական երգերի շարքին, և որը զուգահեռաբար ներկայացնում է իրանական ժողովրդական մանկական երգերից մեկի հետ:

Ս. Հեղայաթն իրանական մանկական երգերի վերաբերյալ գրում է. «Այս երգերն ընդհանրապես շատ հին են, երբեմն դրանց թեման և եղանակը փոփոխվում են, մինչև իսկ դրանց նմանը տեսնում ենք օտար ազգերի մոտ»<sup>9</sup>: Հեղինակը մի օրինակ այդ երգերից ամբողջությամբ ներկայացնում է «Մայրեր և դայակներ» բաժնում<sup>10</sup>: Ահա այն.

؟ ڪڊوم آب؟	آب اومد، آب اومد
؟ ڪڊوم تش؟	همون که تش خاموش کرد
؟ ڪڊوم چوب؟	همون که چوب سوزونده
؟ ڪڊوم سگ؟	همون که سگ رو کشته
؟ ڪڊوم مرغ؟	همون که مرغ و خورده
سینه سرخ دم طلا	اون مرغ زرد پا کوتا
صد تمن دادن ندادمش!	سیاه و سفید گل باقلا
سرپا تشس و خوردش	اون سگه مفتی بردش

(Զուրը եկավ, ո՞ր ջուրը // Ո՞ր ջուրը // Այն, որ կրակը մարեց // Ո՞ր կրակը // Այն, որ փայտն է այրել // Ո՞ր փայտը // Այն, որ շանն է սպանել // Ո՞ր շանը // Այն, որ հավին է կերել // Ո՞ր հավին // Այն դեղին, կարճ ոտով հավին // Կարմիր կրծքով, ոսկե պոչով // Սև ու սպիտակ բակլայի ծաղկին // Հարյուր թուման տվին, չտվեցի // Այն շունը ձրի տարավ // Ոտքերի վրա նստած կերավ:

Ս.Հեղայաթն իր խոսքը շարունակելով՝ գրում է ,որ իրանական այս երգի բովանդակությանը մոտ երգ գտնում ենք նաև հին հայերենում: Ապա թարգմանաբար բերում է մի փոքր կտոր՝ տողատակում ծանոթագրելով

<sup>7</sup> Կոմիտասի տ. Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1999, էջ 13:

<sup>8</sup> Լ. Թեբալեմեզյան. Կոմիտաս. հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 63:

<sup>9</sup> Ս. Հեղայաթ. նշվ. աշխ., էջ 210:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 182:

աղբյուրը՝ *Komitas, Chansons Rustiques*<sup>11</sup>: Մտորն ներկայացնում ենք երգի մի տարբերակն ամբողջովին.

Գնացեք տեսեք ո՞վ է կերել այծը.  
 Գնացին տեսան գայլն է կերել այծը:  
 Գայլըն ու այծը,  
 Այծըն ու գայլը,  
 Ձեզ՝ բարեկենդան,  
 Մեզ՝ բարի գատիկ:  
 Գնացեք տեսեք ո՞վ է կերել գայլը.  
 Գնացին տեսան արջն է կերել գայլը:  
 Արջըն ու գայլը,  
 Գայլըն ու այծը,  
 Ձեզ՝ բարեկենդան,  
 Մեզ՝ բարի գատիկ:  
 Գնացեք տեսեք ո՞վ է կերել արջը.  
 Գնացին տեսան թուրն է կերել արջը:  
 Թուրըն ու արջը,  
 Արջըն ու գայլը,  
 Գայլըն ու այծը,  
 Ձեզ՝ բարեկենդան,  
 Մեզ՝ բարի գատիկ:  
 Գնացեք տեսեք ո՞վ է կերել թուրը.  
 Գնացին տեսան ժանգն է կերել թուրը:  
 Ժանգըն ու թուրը,  
 Թուրըն ու արջը,  
 Արջըն ու գայլը,  
 Գայլըն ու այծը,  
 Ձեզ՝ բարեկենդան,  
 Մեզ՝ բարի գատիկ:  
 Գնացեք տեսեք ո՞վ է կերել ժանգը.  
 Գնացին տեսան հողն է կերել ժանգը.  
 Հողըն ու ժանգը,  
 Ժանգըն ու թուրը,  
 Թուրըն ու արջը,  
 Արջըն ու գայլը,  
 Գայլըն ու այծը,  
 Ձեզ՝ բարեկենդան,  
 Մեզ՝ բարի գատիկ.  
 Ձեզ՝ բարեկենդան,  
 Մեզ՝ բարի գատիկ<sup>12</sup>:

<sup>11</sup> Ս. Հեղայաթն իր օգտագործած աղբյուրի ճշգրիտ հասցեն չի նշել. հիմնվելով նրա ներկայացրած հասցեի վրա՝ որոնումներ ենք կատարել, ֆրանսերեն լեզվով որևէ նյութ չենք գտել, միայն համացանցում Google.am հասցեով հանդիպում ենք՝ Komitas Vardapet. Chansons Rustiques armnienne. Paris, s.n., 19...? // Komitas Vardapet, Arshak Tchobanian. La lyre armnienne: recueil de chansons rustiques, Paris, E.demets, 1906. // www.worldcat.org/title/chansons-rustiques/ocls/016450343.

Ըստ Ս. Հեղայաթի՝ մանկական երգերը տարբերակներ ունեն և ժամանակի ընթացքում փոփոխության են ենթարկվում, սակայն նա իր «ժողովրդական մշակույթ» ժողովածուում միայն պարսկերեն մի տարբերակն է ներկայացնում՝ առանց բացատրության: Մենք գտել ենք պարսկերեն ևս երկու տարբերակ<sup>13</sup>:

Կոմիտասի մոտ վերը բերված երգը հանդես է գալիս մի քանի տարբերակով<sup>14</sup>: «Եկեք տեսեք» (կամ՝ «Ելեք տեսեք», «Գացեք տեսեք», «Գնացեք տեսեք») երգը բարեկենդանի ուրախ երգերից է, որը պատկանում է միջնադարյան կամ ավելի վաղ շրջանին: Յուրաքանչյուր «պատճառ» շարունակվում է «հետևանքով», այսինքն՝ «ուտողը» դառնում է «ուտվող»: Այս կապակցությամբ Ռ. Աթայանը հետևյալ կերպ է արտահայտվում. «...երևույթների այդ փոխկապակցվածության մեջ մարդ ուզում է ենթադրել, փնտրել կամ տնտղել փիլիսոփայական մի ինչ-որ խորքի առկայություն, և համենայն դեպս գոնե մի ավելի պարզ բարոյագիտական խրատ՝ «եթե չես ուզում որ քեզ «ուտեն», դու էլ ուրիշներին մի ուտի»<sup>15</sup>:

Ս. Հեղայաթի և Կոմիտասի՝ ներկայացրած երգի հատվածներում պատկերակառուցման, մտածողության եղանակները նույնական են:

Հեղայաթ–Կոմիտաս այս առնչությունը գալիս է վկայելու, որ երկու՝ հայ և իրանական ժողովուրդները, կրոնական տարբեր ուղղությունների պատկանելով հանդերձ, ունեն ժողովրդական մտածողության ընդհանրություններ:

#### ОТКЛИК ОДНОЙ НАРОДНОЙ ПЕСНИ, ОБРАБОТАННОЙ КОМИТАСОМ, В ИРАНСКОЙ ФОЛЬКЛОРИСТИКЕ

АНАИТ ЯЯМАСИИ (ТЕГЕРАН)

##### Резюме

Глубоки и непосредственны связи С. Хедаята и Комитаса с народным песенным искусством. В своих исследованиях С. Хедаят проводит параллели между иранскими и армянскими народными песнями. Он, в частности, рассматривает одну из народных песен, обработанных Комитасом, и сопоставляет ее с иранской народной детской песней. У Комитаса песня звучит в нескольких вариантах, один из которых называется «Идите, смотрите». Она относится к песням средневековья или более раннего периода. В представленных отрывках песен С. Хедаята и Комитаса наблюдается схожесть содержания, построения образов. Их сопоставление показывает, что иранский и армянский народы имеют много общих черт в фольклоре и народном мышлении.

<sup>12</sup> Կոմիտասի. Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1979, էջ 155:

<sup>13</sup> Google.am, javaneroshd.blogfa.com/ppst-10.aspx; Google.am, robabnaz44.persianblog.ir/tag/ آباءآبآبآبآبآب

<sup>14</sup> Կոմիտասի. Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1969, էջ 38–39, 261–262:

<sup>15</sup> Կոմիտասի. Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 2000, էջ 172–173:

THE RESPONSE OF A FOLK SONG COMPOSED BY KOMITAS  
IN IRANIAN FOLKLORE

*ANAHIT YAHYAMASIHI (Tehran)*

S u m m a r y

S. Hedayat and Komitas have deep and direct connections with the art of folk songs. S. Hedayat drew parallels between the Iranian and Armenian folk songs in his studies. Particularly, he reviewed one of the folk songs composed by Komitas, and compared it with the Iranian children's folk song. Komitas composed and played it in several different ways, and one of them is called “Go and see”. It refers to the songs of the Middle Ages or earlier period. Some similarities between content and images in the presented excerpts of songs of S. Hedayat and Komitas are observed. Their comparison shows that Iranians and Armenians have many common traits in folklore and thoughts .